

Հայաստանում գերդեղակայուն տուբերկուլոզով հիվանդների կարեկցական բուժման ծրագրի ներդրում և իրականացում

Մ.Հովհաննիսյան, Հ. Միքայելյան, Ն.Խաչատրյան, Կ. Դավթյան, Ա.Հայրապետյան

Ներածություն

Տուբերկուլոզը շարունակում է մնալ արդիական խնդիր Հայաստանի Հանրապետության հասարակության և առողջապահության համար:

Այսօր առաջնահերթ է բազմադեղակայուն և գերդեղակայուն տուբերկուլոզի խնդիրը:

Այս աշխատությունում ներկայացված է բազմադեղակայուն և գերդեղակայուն տուբերկուլոզով հիվանդների բուժման նպատակով՝ տուբերկուլոզի կարեկցական բուժման ծրագրի ներդրման նկարագրությունը և ընթացիկ արդյունքները:

Խնդիրներ

2013 թվականից «Տուբերկուլոզի դեմ պայքարի 2007-2015 թվականների ազգային ծրագրի շրջանակներում՝ «Բժիշկներ առանց սահմանների» ֆրանսիական կազմակերպության հայաստանյան առաքելության աջակցությամբ, ներդրվեց բազմադեղակայուն և գերդեղակայուն տուբերկուլոզով հիվանդների կարեկցական բուժման ծրագիրը, որը նախատեսում է Հայաստանում նոր դեղամիջոցների /բեդաքվիլին, լինեզոլիդ և իմիպենեմ/ կիրառում գործող բուժման սխեմաներին զուգահեռ: Ծրագրի շրջանակներում կիրառվում է նաև տուբերկուլոզով հիվանդների բուժքույրական խնամքի նոր մոտեցումներ՝ կապված նոր դեղորայքի ընդունման մեթոդների հետ:

Մեթոդներ

Ծրագրի իրականացման նպատակով գերդեղորայքակայուն և բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներից իրականացվում է հիվանդների նախնական ընտրություն՝ համաձայն նախորդ սահմանված չափանիշների: Նախնական ընտրությունը իրականացվում է Հայաստանում դեղորայքակայուն հիվանդների բժշկական խորհրդատվական հանձնաժողովի կողմից: Հիվանդների վերջնական ընտրությունը իրականացվում և հաստատվում է «Բժիշկներ առանց սահմանների», «Առողջություն և գործնկերներ» և «Ջոնսոն և Ջոնսոն» կազմակերպությունների բժշկական հանձնաժողովների որոշմամբ: Որից հետո հիվանդը ընդգրկվում է տուբերկուլոզի կարեկցական բուժման ծրագրի մեջ: Ծրագրում ընդգրկված հիվանդների խնամքի նպատակով իրականացվել է բուժքույրական անձնակազմի վերապատրաստում նոր գործառույթների ներդրման նպատակով:

Եզրակացություն

2013 թվականի հուլիսի դրությամբ Հայաստանում առկա են եղել թվով 219 բազմադեղորայքակայուն և գերդեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներ, որոնցից 19-ը ապրիլ ամսից ընդգրկվել են վերոնշյալ ծրագրի մեջ և ստանում են նոր հակատուբերկուլոզային դեղամիջոցներ: Ծրագրում ընդգրկված 16 բացիլազատող հիվանդներից 11 (69%) -ի մոտ բուժուման 4 ամիսների ընթացքում տեղի է ունեցել մանրէազատման դադարում: 3 հիվանդի վիճակը գնահատվել է բավարար և նրանք կարող են բուժումը շարունակել ամբուլատոր պայմաններում: